



**ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏԱԶԱՐԻՆ՝
ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅԱՆ ՄԵԾ ՄՐԱՎԱՅՐԻՆ
ՆՈՐՈԳՈՒԹՅՈՒՆԸ ԿՍԿԱ ՕՐԵՐՄ**

Աստվածաշնչական երուսաղեմը պատմական սրբավայրերի, վանքերի և տաճառների մի առողջական տաճառներից հնագույնն է. Ս. Հարության նվազա գմբերագործ տաճառը, կառուցված Քրիստոսի խաչելուրյան և հարության նվիրական վայրերի վրա: Տաճարի կառուցումը բարձրանում է մինչև Դ դարի 20-ական թվականները, Կաստանդիանոս կայսեր ժամանակները:

Ս. Հարության տաճառը ինձնիր մեջ բազմարիլ տեօփիական սրբավայրերի, աղքատակիների, մատուռների մի ամրողություն է, որ մեջ բովանդակում է հիմնականում Քրիստոսի Ս. Գերեզմանը, Գողգորան, Երևան պարտեզը, Գյուղ Խաչը և հայոց Ս. Գրիգոր Լուսավորչի եկեղեցին: Ս. Հարության տաճառը Քրիստոնեական միջազգային սրբավայր է: Նրա գոյնավոր պահպանները են երեք իրավաներ՝ Պատրիարքություններ՝ հայոց, հունաց և լատինաց, որոնք ամենօրյա սուրբ պատարաց և պաշտամունք են մատուցում այնոնք:

17 դարու հնուրյան ունեցող Ս. Հարության այս տաճարի գլխով անցնել են շատ փորորիկներ: Դարերի ընթացքում տաճառը ենթակիվել է բանական և նաղակական փորորիկների պատճառած ավերածուրյանց, որոնցից հատկապես պիտի է միջին 1927 թվականի մեծ երկրաշամփ պատճառած լուրջ վճառները:

Իրավաներ երեք Պատրիարքությունների համաձայնուրյամբ, որոշվել է Քրիստոնեության այդ հնագույն սիստավայի Քերանուրությունն սկսել այս օրերին: Ընդհանուր նորոգության ծախսը հախատելով է մեկ միլիոն ամերիկական տասնունգ, որը պիտի նոզան իրավաներ երեք Պատրիարքությունները հավասար չափով:

Այսօր երուսաղեմի հայոց Պատրիարքական Արքոր տնօսեական-հյուրական ոչ բազալի կացուրյան մեջ է: Պատրիարքարանը շի կարող Ս. Հարության տաճարի նորոգության մասին մտածել իր անփական միջոցներով: Ս. Հարության տաճարի նորոգության մասնակցության համար ՀԱՄԱՀԳԱՅԻՆ հարց է: Դա ԲՈՎԱՆԴԱԿ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՏՎԻ, ԱԶԳԱՅԻՆ ԱՐԺԱՆԱՎՈՐԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՊԱՐՏՈՒԹՅԱՆ, ՀԱՎԱՏԻ ԿԵՆՍՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ է:


Վեհափառ Հայրաբարք, Մայր Արքոր Ս. Էջմիածնի վաստա են, որ նայ ժողովուրդը, որ պես դաշտավար երեք իրավաներերից մեկը Քրիստոնեական միջազգային այդ սրբավայրին, կանգ չի առնի հյուրական ոչ մի զոմուրուրյան առաջ, գոյացնելու համար Ս. Հարության տաճարի բնդիմանուր վերանորոգման ծախսների իրեն բնկած բաժինը:

ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1927-ին ի վեր կատարվող բանակցությունները մասնակի Հաջողություն մը արձանագրեցին: Հունաց, լատինաց և Հայոց Պատրիարքարանները 19 փետրվար 1958-ին սկզբունքով համաձայնեցան վերանորոգելու

Ս. Հարության տաճարին մուտքն ու անորներքնակողմը գտնվող Պատանատեղվույն առաստաղն ու շրջանի պատերը: Խսկ հետագա նիստերու մեջ որոշվեցավ գործին ձեռնարկել Ս. Զատիկին եռք:

Այս նորոգությունը առաջին քայլն է ամբողջական վերանորոգության: 1927-ին պատահած երկրաշարժը խախտած է շենքին և մասնաւոր այլ աշխատանքները: Տաճարը այս մեջ առաջարկված է շատ վատ տպավորություն մը կթողուն, այլև կնեղցնեն միջավայրը ու կխափանեն արարողությունները: Քրիստոնեության սիրտը եղող այս




ԵՐՈՒՍԱԼԵՄԻ Ս. ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏԱճԱՐԸ

և անդիմական կառավարության 1935-ին հաստատած երկաթյա և տախտակյա բարձր հենարաններուն շնորհիվ: Ասոնք սակայն, Տաճարին մուտքին առջև և Շ. Գերեզմանին

մեծ սրբավայրին իրեսուն տարիներու այս անշուր և անպատվարեր վիճակը հետևանքն է անոր սեփականատեր երեք ազգերուն՝ Հունաց, Հայոց և լատինաց տեսակետներու տարբերության՝ նորոգության շուրջ:

Միջազգային այս մեծ սրբավալիքն ներկա անփառունակ երևություն նախատինք մընէ նախ իր հանգամանքին և ապա իր անցյալի պատմության։ Սկսյալ առաջին դարերեն ան մեծ երկյուղածովյամբ հարգանքի առարկա եղած է ամենազգի ուխտավորներու Հեսու-

նվերներով պայծառացուցած հն Ս. Հարությունը։ Աշխարհի չորս ծագերուն քրիստոնյաներ միշտ ցանկացած են իրենց հոգեկան ծարավը հագեցնել գեթ անգամ մը համբուրելով։ Ս. Գերեզմանը։ Ու երբ քսան դարերու ընթացքին ան հանդիպած է աղետներու՝



ՔՐԻՍՏՈՆԵ. Ս. ԳԵՐԵԶՄԱՆԸ Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՏԱԺԱՐԻ ՄԵջ

վոր երկիրներն ամենքն ալ հոս գիմած են երկրպագելու Ս. Գերեզմանին և կատարելու իրենց ուխտը կամ մատուցանելու իրենց ծառակությունը։ Աշխարհի հզոր կայսրեր, կայսրուհիներ, իշխաններ ու իշխանուհիներ եկած ու իրենց բարեպաշտական սրտազեղ

կողոպուտի և ավերումի, քրիստոնյա սըրակ փութացած են զայն վերահաստատել իր արժանավայել փայտուն գիրքին մեջ։ Այդ աղետներեն վերջին երկուքն էին 1810-ին մեծ հրդեհը և 1927-ին զորավոր երկրաշարժը։

1927-ին երկրաշարժը խախտելով՝ ամբողջ Տաճարին կառուցը, ճեղքեր հառաջ սերավ պատերում և սյուներում մեջ՝ Քանի մը տարի ետք երբ հարկ տեսնվեցավ կաթողիկեին— Հունաց Մայր Եկեղեցին Ս. Գերեզմանին մոտ— ծանր գմբեթը փլցնել և նոր մը շինել՝ նշմարվեցավ, որ ճեղքերը ավելի լայնցած էին: Ուստի անդիմական հոգատար կառավարությունը կոնդոնեն հրավիրեց Ռիլամ Հարվին, պատմական շենքերու ճարտարապետը: Հիշյալը քննեց Տաճարը և հանձնարարեց հաստատիլ այժմու երկաթյա և տախտակյա հենարան-սյուները: Ասկե հետո թե' անգիտական հոգատար և Հորդանանի կառավարությունները և թե' երեք Պատրիարքարանները հետզհետի տարիներու ընթացքին հրավիրեցին եվրոպացի մասնագետ ճարտարապետներ, ինչպես՝ կուզի Մարանկոնին, Վուկին, Բավիլ Մենսը, Ժան Տրյուվելըն, Օպլանդուը, Մարտիրոս Ալբոմյանը և ուրիշները, որոնք քննեցին ու շեշտեցին Տաճարին անմիջական նորոգության անհրաժեշտությունը: Ասոնք երեք ծրադիրներ ներկայացուցին.

ա) Ի հիմանե քանդել Տաճարը և կառուցել ուրիշ մը արդիական ոճով և ավելի ընդարձակ:

բ) Պահել ներկա Տաճարին կառուցը, միայն ընդհանուր ամրացում կատարելով և բանալով Ս. Գերեզմանի բոլորակաձև շըրջավայրը եզերող քառանկյուն սյուները՝ երեան բերելու համար հին, կլոր սյուները: Նաև վերցնել ասոնց հենարանները և շըրջակայքը գտնվող խուցերը՝ ընդարձակելու համար շրջավայրը:

գ) Պահել Տաճարին ներկա գոյավիճակը՝ միայն ընդհանուր ամրացում կատարելով:

Այս ծրագիրներն առաջինը մերժվեցավ Պատրիարքարաններուն կողմէ: Գալով երկրորդին, լատինաց և Հայոց Պատրիարքարանները համաձայն են ադոր, իսկ հունաց Պատրիարքարանը կողմնակից է երրորդին:

1956-ին ճարտարապետներ Պարասկեապուլու (Հուլյն), Հայոց Գուանոն (Լատին) և Մ. Ալթունյան առաջարկեցին նախ նորոգել Տաճարին մուտքը, Պատանատեղին և կաթողիկեին գմբեթը:

1957-ին կառավարիչը առաջարկեց ավելցրվել ճարտարապետներու տեկնիկ գրա-

ւենյակին իբրև պետ՝ կառավարության ներկայացուցիչ ճարտարապետ մը:

Իսկ 1958 փետրվար 19-ին, տեկնիկ գրասենյակի ճարտարապետները՝ Անժելոս Մալիոս (Հուլյն), Հայր Գուանոն (Լատին) և Յուսեֆ Մուսելլեմ (Հայոց կողմէ), երեք Պատրիարքարաններու ներկայացուցիչներու ներկայությամբ, համաձայնեցան ձեռնարկել 1956-ին որոշված՝ վերոհիշյալ մասնակի նորոգությանց, Ս. Զատիկին ետք Մշակվեռակ նաև մանրամասն նորոգության ծրադիր մը այդ տեղերու համար: Այս առթիվ նամակով խնդրվեցավ կառավարիչն, որ ներածվելիք շինանյութերը մաքսագերծվին:

Չենք գիտեր, թե այս նախաքայլը ո՞րքան պիտի արժե, սակայն ընդհանուր վերանորոգությունը կկարծվի արժել մեկ միլիոն ստեղնինգ, զորս հավասարապես պիտի հոգան երեք իրավատեր եկեղեցիները, լատիններ, հայեր և հովներ: Բնական է մտածել, թե Հայոց Պատրիարքարանը չունի նորոգության այս ծախքին իրեն ինկած գումարը, որում հայթայթումը մեր բարեպաշտ ժողովուրդին պարտքն է: Մեր սրբավայրերը համապային են: Յուրաքանչյուր հայ անհատ ժառանգական իրավունք մը ունի անոնց մեջ, և ուրիմն նաև պարտավորություն մը՝ իր ստացվածքը միշտ անվթար ու շեն պահելու: Որևէ մեկը, որ զգար այս պարտավորությունը, կկորցնե իր ժառանգական իրավունքը: Եվ այսպես, եթե Ազգը զգա նույն պարտավորությունը՝ ան օր մը կզրկվի իր ժառանգած սրբավայրերն: Անշուշտ ոչ ոք կփափագի նախնյաց արյունով ու քրտինքով շահված ու պահպանված սրբավայրերը կորսնցնել կամ անշուք թողով զանոնք: Խատի յուրաքանչյուր հայ պատասխանաւորվուն և պարտականություն ունի այս սրբավայրերը պայծառացնելու օժանդակելով երրորդ հարկ կզգացվի:

Ս. Հարության տաճարը իր մեջ կը բանդակե Ս. Գերեզմանը, Գուգութան, եկեղեցիները, մատուռներ և խուցեր: Ասոնցմենունք կպատկանին հավասարապես հայոց, հունաց և լատինաց, ինչպես Ս. Գերեզմանը և Պատանատեղին, և ումանք կպատկանին երեք հարանվանություններն որևէ մեկուն: Այսպես, հայեր ունին թ Գուգութան և Ս.

Գրիգոր Լուսավորիչ եկեղեցիները և այլ մատուններ: Լուսավորիչի եկեղեցին, Հայկան ոճով, կես ստորերկրյա եկեղեցի մըն է՝ կանգնած շորս սյունիքու վրա: Տաճարին մեջ երեք աղքաց արարողություններ էկատարվին հաստատված ժամանակացուցի մը համաձայն: Այդ արարողություններին ամենակարևորն է սուրբ պատարագը, զոր հույններ, հայեր ու լատիններ կարգավ կմատուցանեն Ս. Գերեզմանին վրա, ամեն առավոտ ժամը 1.00—7.00: Հայեր ունին նաև թափորներ ամեն ուրբաթ, շաբաթ և կիրակի օրեր, երեկոյան ժամը 4-ին:

Թաղմագարյան այս իրավունքներու առանձնաշնորհին պահապան Ս. Հակոբյանց միաբանությունը իրեն գլխավոր նպատակ ունեցած է անոնց պահպանումը և անոնց փարած է անձնվեր սիրով:

Անցնող դարերու ընթացքին ո՞չ աղքային կրանքի պայքարները և ոչ վանական ներքին հարցերը վնասած են այդ պահպանման գործին՝ քանի որ այս վերջինը եղած է գերագույն նպատակ և ուժու: Շատ տառապած է անցյալին Ս. Հակոբյանց միաբանությունը. մեկ կողմե դավանակից եկեղեցիներ և եկող գացող կառավարություններ, և մյուս

կողմե պարտփեր ու պարտապահանջները շարունակ նեղած ու ճնշած են զայն: Սակայն ամեն ասոնք հաղթահարված են միամանության անսպառ անձնազո՞ւ ոգիին միշցոցավ, որուն համար ան արժանացած է զգինվորյալ միաբանությունն կոչումին:

Բայց անշուշտ Սրբոց Հակոբյանց միաբանությունը իրեն միշտ ապավեն ունեցած է Աստված և հայ ժողովուրդը, որ բոյն իրավատերն է իր սրբավայրերուն ժառանգության: Անցյալին մեջ հայ ժողովուրդը երբեք չէ անտեսած այդ սրբավայրերը, որոնց օժանդակության հասած է միշտ: Այժմ ևս, երբ Ս. Հարության տաճարը անհրաժեշտարար պիտի նորոգվի, եկեղեցասեր ու աղքասեր հայորդիներ պետք է փուլթան տալու իրենց լուման երկնավոր Հոռ Տունը և Փոկչին Ս. Գերեզմանը պատվարեր վիճակի մեջ դնելու համար:

Ս. Զատիկեն ետք պիտի ձեռնարկվի Տաճարին մուտքի մասի նորոգության....

ԱՐԻՍ Ա.ԲԵՂԱ ՇԻՐՎԱՆՅԱՆ
(Երուսաղեմ)

(Թեյրութ, «ԶԱՐԹՈՒԹ» օրարեր, 11 ապրիլի 1958 թ.)

